

Արդէն այս փոփոխութիւնն ինքիւրը ինքեմն ուրիշ բան չէ բայց եթէ խաշոր ս ու ա մը: Անոնք որ այդ քըստմինի տիպարը պաշտպանելու համար կը յիշեն մեկ քանի ներքողայինց երկտողներ որոնք տնոր Հոմալէթին ներկայացմանը առիթով երեւցան եւրոպական աւլ եւ ալ թերթերու մէջ: զիտալու են որ այդ երկտողները անստորագրել են, գրուած են չէ թէ քննադատներէ, ալ չէ պարզ լրատրագրներէ եւ այդ լրատրագրներն ալ մեր տղերքերու սին շահագործուած են զիտալուրպէս իր Պոլսոյ Թատրոնին» եւ Հայաստանին իւնիքուսն վրայ քաշած չարախանքներուն» համար, եւ մասամբ ալ իր զիտագոյնութեան բնածին անուրանալի յատկութիւններէն գրուուած ու խառնած: Բացարձակապէս սխալ է կարծել թէ փաշայեան Հոմալէթը, յաջողութեամբ ներկայացուց: Այնչափ զեշտ խաղաց Հոմալէթը որչափ թիւնիլլոն, որի կարելի է ի ա զ ա լ բառը գործածել, քանի եւ ոչ իսկ զերը քոջ տրոփած էր երկու Տիգրուս ալ: Առաջին անգամ՝ որ ճշմարիտ քննադատ մը, Ֆրանսիաց Սասեն, եկաւ մեր հանձնարարին ներկայացմանը հանդիսատեսն ըլլաւ, արգիւնքը տեսանք: Թէ Սասեն իր կրած սպաւորութիւնը ո՞րքան աղմկուից ու մեր ազգային արժանապատուութեանը համար ո՞րքան վիրաւորիչ կերպով մը արտաստայեց այդ երեկոյթին աւարտին, այդ մասին կարող են վկայել այն բոլոր բարեգիտական Հայերը որոնք ներկայ էին:

Հիմա բառ մը ունիմ աւելցնելու, եւ այլեւ փակուած կը նկատեմ այս տաղտկալի պատմութիւնը, որով զիջալ զբաղիլ՝ միմիայն մեր հայրասիր ըստրայականին տեսնելով անոր ունեցած կարեւորութեանը համար: Թիֆլիսի հարազատ, վննտիկ Ռազմավագը եւ վառահայրի Շարաբուզը փաշայեանը հանձնար մը» կը նշկատեն. շատ լաւ. Կ'ստաւարկեմ այդ երեք թերթերուն որ այդ պարտքը հրաւիրեն ներկայացում մը տալ իրենց քաղաքին մէջ Մատուանդ Թիֆլիս ու վառահայրի ըստրայեան ներկայացումները անպակաս են. շատ զիւրիշ է այդ երկու քաղաքներուն մէջ այսօրափայտանալան» ներկայացումը կազմակերպել. թող մտեն տեսնեն զինքը, եւ այն տեսն հետագայի պիտի ըլլամ իրենց սպաւորութիւնը իմանալու. ասի՝ «հանձնարեմ համար»:

Գալով բ ու ն ինքորդի, — ինչ ալ գրեն, ինչ ալ ըսեն, ինչ ալ ընեն, — եւ ճամբուս վրայ մեր խաչադրութիւնն արձանկանութեամբ իմ իմ բացառականութիւնները չեն որպիսի արդիւնէն դիմ — ամեն աղագամ որ փաշայեանը համարձակի ներկայանալ եւրոպական հասարակութեան՝ իրեն Պոլսոյ Թատրոնին մեծ ոգեւորութեամբ, առաջուց զիմաւկաւործ պիտի ընեն զինքը:

«ԱՄԲՈՒԱՅԻՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ»

(ԴՐՈՇԱԿ N 3, 1899 Մօսկա)

— 00 —

Յեղափոխականութիւնը հիմնուած է ընդհանուր բացասութեան վերայ: Բացասութեան այդ ընդհանրութիւնն է, բացարձակութիւնն է որ յեղափոխական բոլոր ծրագիրները մեզ համար այնքան պարզ եւ պարզ է դարձնում: Բայց եւ հէնց այդ բացարձակութիւնը յեղափոխական դատողութիւններին միակողմանի եւ սխալ լինելուն պատճառն է դառնում:

«Մարդիկը հրեշտակ են» — Այս դատողութեան վերայ յեղափոխական ոգին անուամբ հետեւեալ հակադրեցութիւնը՝ «Մարդիկը սատանայ են»: Առաջին կարծիքը կարող է սխալ լինել, իսկ զորանից՝ երկրորդը, նրա հակադրութիւնը, ճիշդ չէ դառնում: Ամենածիշդը կը լինէր, օրինակ, ասել. «Իրենց բնաստորութեան մէջ մարդիկ ունին ինչպէս հրեշտակային, այնպէս եւ սատանայական յատկութիւններ»: Բայց յեղափոխականութիւնը այսպիսի յարաբերական դատողութիւններով զուրկ չէ գալիս հրապարակ. եւ, զուցէ, դուրս էլ չէ կարող զալ: Կարելի է եւ հրեշտակ վը Պոնը իրաւացի է, ասելով որ միայն այն կողմակցութիւնը ազդեցութիւն եւ ապագայ ունի հասարակութեան մէջ, որը ունի պարզ միակողմանի եւ բացարձակ ծրագիր, լինի եւ այդ ծրագիրը ամբողջապէս անմիտ, Հաւանական է որ՝ գործնական տեսակետից՝ այդպէս էլ պիտի լինի, բայց նորից կրկնում եմ, որ այդ չէ նշանակում թէ այդ ոգով յայտնած դատողութիւնները ճիշդ են:

Այսպիսի մտքեր ծագեցին իմ մէջ, երբ կարդացի «Ամբոսային արամբանութիւն» յօդուածը Դրոշակի մէջ, Այդ յօդուածի վերայ արժէ կանգ առնել, որովհետեւ նա շատ բնութիւն է մեր յեղափոխական թերթերի համար: Երբ Հայոց հասարակութեան այն մասը որ կոտորածներից անալ նշայում էր մեր յեղափոխականներին վերայ ինչպէս «միակողմանի» եւ այն մասը որ երբեք նոցա չէր համակրում, կոտորածների ժամանակ եւ կոտորածներից յետոյ յանկաւոր զարմիրներն զէպ ի ժընեւ ու լնդոն իրենց հարցադրան եւ յարձակողական հայեացքները «Դրոշակի եւ Հնչակի խմբագրութիւնների գրութիւնը դժուարացաւ: Պահանջ եղաւ պաշտպանուելու «ներքին թշնամիներ»



դէմ, եւ հաւա այդ յեղափոխական թերթերի գրեթէ իւրաքանչիւր համարում սկսեցին եւ բեւառն քաջ մի շարքումով ձեւած փոքր եւ մեծ յօդուածներ իրենց անվերջ յարձակումներով «հայկական զգիւրների եւ փարսեցիներին» վերայ:

«Ամբոխային տրամաբանութիւն»ը աշգլիսի դրուածքներէց մէկն է:

Այդտեղ կարգում ենք՝ «...Հայոց հասարակութեան որոշ շրջաններում տարածուած է այն անհեթեթ կարծիքը, թէ հայ յեղափոխականներն են հայկական սոսկայի կոտորածների իսկական պատճառը:» Դրոշակի կարծիքով այսպիսի կարծիքը սխալ է, «գարշելի եւ վնասական»:

Երկու ձեռքով ստորագրում եմ:

Բայց ո՞րն է ճիշդը:

Դրոշակի շարունակում է. «Հայ յեղափոխականները ոչ միայն մաս չունին կոտորածների այդ իսկական պատճառներում, այլ եւ...» (*) եւ այլն:

Որքա հետ ամենեւին համաձայն չեմ:

Եթէ սխալ է այն կարծիքը, իբր թէ Հայոց կոտորածներին մէջ «հայ յեղափոխականները իսկական պատճառն» են եղել, այդ չէ նշանակում որ նոքա ամենեւին մաս չունին այդ «իսկական» պատճառներում: «Post hoc, ergo propter hoc» տրամաբանութիւնը այդ յօդուածի հեղինակը անուանում է «ամբոխային տրամաբանութիւն»։ շատ ուղիղ է, իսկ ինչո՞վ է նորանից բարձր այն տրամաբանութիւնը, որը այս դէպքում գործածում է տրամաբանութեան երրորդ կանոնը—կամ A կամ B, միջինը չէ կարող լինել—ցատքելով մի ծայրագիծութիւնից դէպի միւրը, ի՞նչպէս անուանենք այսպիսի տրամաբանութիւնը. գուցէ, յեղափոխական տրամաբանութիւն ։

Զարմանալի՝ բան, ինչպէս բերանացի խօսակցութիւններից մեր յեղափոխականների հետ, այնպէս եւ Դրոշակի եւ Հնչակի յօդուածներից երեւում է որ մեր յեղափոխականների բեւեակայութեան մէջ մտքով հայ ազգը բաժանուած է միայն երկու մասի. մէկը հաւատում է որ Դրոշակն եւ Հնչակն են հայ ազգի միակ ազատիչները, միւրը՝ որ այդ յեղափոխական կազմակերպութիւններն են մեր ազգի միակ քանդողը: Միթէ յեղափոխական շրջաններից դուրս ամբողջ հայ ազգը

այն կարծիքի՞ է, որ միայն յեղափոխականները յառաջ բերած են հայկական ջարդերը: Միթէ հայ հասարակութեանը մէջ չկան մարդիկ, որոնք ծիծաղելի կը համարեն առհասարակ հերքել յեղափոխութեան նշանակութիւնը՝ կեանքի, պատմութեան մէջ, որոնք չեն հերքում, սկզբունքով եւ հայկական յեղափոխութիւնը, բայց այնու ամենայնիւ ասում են. «Թէպէտ եւ Տաճկաց կառավարութիւնը ու եւրոպայի շատ են մեղաւոր, բայց բաւականաչափ մեղաւոր են եւ հայ յեղափոխականները:» Ինչո՞ւ մեր յեղափոխականները այս միջին կարծիքը չեն նկատում, կամ եթէ նկատում են, ինչո՞ւ ուշադրութիւն չեն դնում, այլ միայն յարձակում են մի միտքով կարծիքի վերայ, որ «հայ յեղափոխականներն են հայկական սոսկայի կոտորածների իսկական պատճառը» —մի կարծիք որ իրենց կարծիքի հակադրութիւնն է կազմում: Գիտութեամբ թէ անգիրտութեամբ է գործածուած նրանց կողմից այդ ամթոնը:

Հետեւեալ համեմատութիւնը գուցէ կարողանայ մեզ բացատրութիւն տալ:

Ինչո՞ւ ներկայ հասարակական սիստեմի եւ սկզբունքների պաշտպանողները աւելի մեծ պատասխանութեամբ վիճարանութիւններ են անում անիշխանականների քան թէ, օրինակ, ընկերվարականների հետ: Ինչո՞ւ բուրժուազական մամուլը օգտուած է ամենալարմար դէպքից, որպէսզի հաւատացնէ հասարակութեանը, որ ընկերվարականները նոյնն են ինչ որ անիշխանականները: Ինչո՞ւ նոյն մամուլի աւելի բարեխիղճ մասը ընկերվարական վարդապետութիւններին եւ ծրագիրներին տալիս է միշտ ծայրագիծ կերպարանք, ինչո՞ւ Բիւսմարկը սերում էր աւելի անիշխանականներին քան «սոցիալ-դեմոկրատներին» եւ կառավարութիւնները գուցէ ուրախ լինեն եթէ բոլոր սոցիալ-դեմոկրատները անիշխանական դառնային. հակառակ է ինչու: Անիշխանականները տրամաբանական հակադրութիւններ են կազմում իշխանական սկզբունքի, մի գաղափար որ ժողովրդի առողջ գատողութիւնը չէ կարող ընդունել, Ուրիշ բան է ընկերվարականութիւնը, սորա մասին կարելի է երկար վիճել, նա կարող է սխալ լինել, բայց նա անիմաստ է, ինչպէս անիշխանականութիւնը. եւ հէնց այդ պատճառով առավել աւելի վտանգաւոր է բուրժուազական հասարակութեան համար քան

(*) էջ 69

Թէ վերջինը, կառավարութիւնը անիշխանա-
կաններին քանտարկում է, կախում է, իսկ
ժամուրը միեւնոյն ժամանակ հանգստացնում
է հասարակութիւնը, բացատրելով ովքեր են
այդ պատժուածները: Նա ասում է, որ վեր-
ջինները կամեցում են ամբողջ աշխարհը տակն
ու վերայ անել: Լրացոյրները առանձին հա-
ճոյքով յայտնում են, որ այս ու այն բնիկի
կարծիքով, այս եւ այն անիշխանական վեր-
նոտ են կամ մտաւոր հիւանդութիւն ունին,
եւ սորա հետեւանքը լինում է որ ամէն միան-
իշխանականի կախուկեւոց յետոյ, հասարակու-
թիւնը զբեթէ շնորհակալ է իշխանութեան,
որ ազատեց նրան այդպիսի մի մտախառու-
րից: Նոյն միջոցներով կոտիկ սոցիալ-դեմոկ-
րատները դէմ, ոչ թէ միայն ապարդիւն ըսն
է, այլ եւ մինչեւ անգամ վնասակար: Ժողո-
վուրդը ամենեւին չէ ուզում հաւատալ,
որ «սոցիալ-դեմոկրատ»ները «վատ» եւ «հի-
ւանդ» մարդիկ են, որ նոքա ամբողջ
մարդկութեան թշնամի են, եւ այլն. սոցա
դէմ բաւական չէ արձակել լոկ ազադական
յանուն «մարդկութեան» եւ բարոյականու-
թեան», եւ դիմում անել մարդուն առողջ դա-
տողութեանը:—միջոցներ, որ գործածոււմ են
առհասարակ անիշխանականութեան դէմ: այս-
տեղ հարկաւոր է լուրջ փաստերի վերայ հիմ-
նուած վիճարանութիւն:

Մեր յեղափոխական օրգանները չեն հետե-
ւում արդեօք նոյն մեթոտին: Արդեօք, դիւ-
մամբ չեն նոքա գործում ըլուր հակա յեղափո-
խականներին մի ընդհանուր անունով «փարիսե-
ցի», «զպիւր» կամ «վախկոտ»: Ի հարկէ, կան ան-
ձեր, որոնք նեղ անհնական շահերի պատճառե-
րով զատապարտոււմ են յեղափոխականներին,
որովհետեւ հայկական հարցի սուր կերպարանք
ստանալը նոցա վնասում է. բայց նոցա որոնք
ըսն նպատակալարմար տեսակէտից պահա-
րակում են «ներկայ հայկական յեղափոխու-
թիւնը», խառնել եստեղները եւ վախկոտ-
ների հետ, դա նշանակում է գործադրել այն
մեթոտը, որի յարմարութիւնը բացատրեցինք
վերեւ, ցոյց տալով թէ ինչո՞ւ աշխատում են
սոցիալ-դեմոկրատներին խառնել անիշխանա-
կաններին հետ: Յեղափոխութեան զօրաբա-
ժինը ըաղիկացած է համարեա տարամբժա-
պէն երբառապրոթութիւնից, իսկ այս վերջինը,
բնականաբար, կեանքի երեւոյթներէից եւ
անցքերից հետաքրքրոււմ է աւելի նոցա բա-
րոյական ըսն թէ դործական մասով: Այս

հանգամանքը արդէն ցոյց է տալիս Դրօշակին
եւ Հնչակին ինչպէս պէտք է պաշտպանուի
հակա յեղափոխականներ ղէմ, դուրս գալով
այն իրողութիւնից որ յեղափոխականները ի-
րենց անձնուէր գործուէնէութեամբ կամենում
են ապստել անբաղդ հայ ազգը սարսափելի դը-
րութիւնից, նոքա անոււմ են մի եղբակացու-
թիւն, որ կարող է յեղափոխական արտաբա-
նութեան նմուշ համարուել, այսինքն—Ով որ,
ուրեմն, յեղափոխութեան ընդդէմ է, չէ ցան-
կանում ազատել Հայերը իրենց դժուար դրու-
թիւնից, «անարժան եղբայր» է դառնում,
մոռանալով սուրբ վրէժը, եւ այլն. իսկ ով որ յե-
ղափոխականներին դատապարտում է՝ նոցա
պատասխանատուութիւնը որոշելով, չէ իմանում
զնահանել անձնուէր գործուէնէութիւնը եւ
կորցրել է ամէն բարոյական հակացողու-
թիւն:—Ստեղծելով այսպէս Դրօշակից եւ Հնչա-
կից ազնուութեան եւ հայրենասիրութեան մե-
նաշունը, այդ թերթերի վարիչները միշտ վի-
ճում եւ պաշտպանում են բարոյական կամ ա-
ւելի ճիշդ ասած, quasi—բարոյական հողի
վերայ:

Հայկական յեղափոխութեան քննադատու-
թիւնն այստեղ անել ամենեւին մտադրել չեմ եւ,
այդ հետեւան չէ, եւ պահանջում է լուրջ ու-
սումասիրութիւն այն դերի, որը խաղացել
են յեղափոխականները հայկական կոտորածնե-
րում, կամենում եմ միայն ցոյց տալ այն հո-
գը, որի վերայ պէտք է վիճել հայկական յե-
ղափոխութեան մասին:

«Ամբոխային տրամաբանութիւնը» վերջա-
նում է հետեւեալ խօսքերով. «Հայ յեղափո-
խականները ոչ միայն մաս չունին կոտորած-
ների այդ իրական պատճառներում,—այլ եւ
խորին համոզմունքով պնդում ենք—նրանք ի-
րենք, ամբողջ հայ յեղափոխական շարժումը,
ոչ այլ ինչ է, եթէ ոչ նմանապէս մի անհրա-
ժեշտ բնական հետեւանք միեւնոյն տնտեսա-
կան ու պատմական-քաղաքական պատճառ-
ների»:

Մի րոպէ եւ չեմ կասկածում, որ հայ յեղա-
փոխութիւնը «բնական հետեւանք» է. բայց այս
խոստովանելը զեւ չէ նշանակում սեփական
ձեռքերով բերանը փակել եւ քննադատութեան
իրաւունքից զրկուել: Ոչ մի «բնական հետե-
ւանքը» մարդու անմեղ չէ կորող չինել, եւ
ամէն պատասխանատուութիւնը կեանքի մէջ՝
«բնական հետեւանքների» վերայ գցել, դա
նշանակում է,—ինչ վերաբերում է մեզ հե-

տաքերըդ հարցի, —չհասկանալ ինչո՞ւմ պէտք էր իսկապէս կայանար հայկական յեղափոխութեան այդ բնական հետեւանքի գերը :

Բնական գիտութիւններէ մէջ մենք կարող ենք բաւականաւ ջոյց տալով միայն պատճառները, իսկ պատմական—մարդկային անցքերի մէջ, այսինքն անցքերի որոնք միայն հոգեբանական աշխարհում են երեւան գալիս, երեւոյթներէ ծնունդը յոյց տալով, մենք դեռ չենք ապացուցանում այդ երեւոյթի անհրաժեշտութիւնը եւ իսկապէս ինչն է երեւոյթի մեծ մասը մնում է մեզ համար անբացատրելի, եւ մենք չենք իմանում ինչ է եղել նորա նպատակը, Անշուտ հոգեբանական աշխարհում («ինչո՞ւ») հարցը նշանակում է աւելի — «ի՞նչ բանի համար» քան թէ «ի՞նչ պատճառով» :

Ուրեմն, նոյնպէս եւ Հնչակեան եւ Դրօշակեան կազմակերպութիւնները երեւան են եկել՝ ոչ միայն ինչպէս «բնական հետեւանք» այլ եւ դիւաւաւորական պարզ որոշ պաշտօնով եւ իրականացումով, Անշուտ : Այստեղից հարց է ծագում—ինչպէս է կատարել այդ օրգանը իր դերը՝ իր որոշ նպատակը իրագործելու համար, ո՞րքան նպատակալարմար է եղել իր գործունէութիւնը :

Ահա, իմ կարծիքով, այն տեսակէտը, որով պէտք է ղեկավարուել՝ մեր յեղափոխութիւնը քննադատելու ժամանակ : Բայց նախ եւ առաջ հարկաւոր է միշտ աչքի առաջ ունենալ հետեւեալ սկզբունքները, որոնց արհամարհելը առհասարակ ու է զննադատութիւն անկարելի է դարձնում :

ա. Զխառնել անձերի եւ գործերի քննադատութիւնները միմեանց հետ :

բ. Հայրենասիրութիւնը, պղնձութիւնը եւ ճշմարտութիւնը չկեղծողնայնեւ («Նշողնում») եւ «Ժընեւում», այսինքն չկարծել որ «Հնչակեան կամ «Դրօշակեան» լինելը *conditio sine qua non* է այդ յատկութիւններն ունենալու» եւ վերջապէս :

գ. Նպատակների եւ միջոցների քննադատութեան ընթացքում չղեկավարուել սեպհական ձգտումներով եւ ճաշակներով :

Այս երեք կէտերում մեր յեղափոխականները մեղանշում են բաւականին չափով :

ԳԵՌԴԻ ՄՆԵՐԻՔ-ԿԱՐԱԳԻՈՋԵԱՆ

Բերլին



ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Սեպտեմբեր 14 թուականով Պոլսէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ՝ «Հայոց պատրիարքը Սուլթանին յանձնած է մեծոքանքով մը հայ ժողովրդին անհաղորդելի կացութեան վրայ, եւ պնդած է որ բարուղում մը կատարուի : Պատրիարքը բերանացի աւելցուցած է որ իր ազգին առջեւ վարկաբեկեղած է ինքը, եւ եթէ Սուլթանը մերժէ խնդրուած բաները շնորհել, ինքը եւ Ազգային Ժողովը որոշած են իրենց հրաժարականը տալ» :

Օրմանեան այս որոշումը տալ տարկուած է իրան ժողովին ճնշմանը սակ (ինչպէս մեզ կը հաղորդեն Պոլսէն), եւ ասի պարզապէս արդիւնքն է արտասահմանի Հայութեան արտաշայտած միահամուռ բողոքին :

Սուլթանին համար դժուար պիտի չլըլայ ըմբռնել որ Օրմանեանին հրաժարականը պղտիկ կատակերգութիւն մըն է որ իրեն նպատակ ունի հայ ժողովրդին բերանը գոցել, եւ մէկ երկու անուշ-լիզու խոստումներով պիտի հրաւիրէ զայն իր աթոռին վրան նորէն հանգիստ տեղաւորուելու :

Ասի միայն մեր տպաւորութիւնը չէ, Թաւր, որ թեթեւ լրագրի համբաւ չունի, միեւնոյն խորհրդածութիւնները կը ներկայացնէ շատ կարեւոր խմբագրականի մը մէջ, ուր մեր Բոջանան բարեկամը Օրմանեանին հոգեբանութիւնը կը վերլուծէ եւ միանգամայն այդ առթիւ հայ ժողովրդին արդի կացութիւնը կը պատկերացնէ թափանցանք ըմբռնողութեամբ մը եւ անկեղծ յուզումով մը : Կը թարգմանիք այստեղ այդ յօդուածը, որ իր ազդեցութիւնը պիտի ունենայ Նըլտըդ-Քէօշիկի մէջ եւ ինչպէս Գում-Քափու :

«Թէպէտ հանրային կարծիքը կը սկսի վարժուիլ հրաժարականի մատուցման ու մերժման այն փոքրիկ կատակերգութեան ոգուն մէջ կը սահմանափակուի այս վայրկեանին Սուլթանին եւ Հայոց Պատրիարքին աստեղծուած յարաբերութիւնները, կարեւոր է սակայն ուշադրութիւն հրաւիրել նոր միջադէպին վրայ որ Գում-Քափուի եւ Նըլտըդ-Քէօշիկի միջեւ այս օրերս պայթած է Օրմանեան սրբազանը կ'ուզէ, կ'ըսեն, այս անգամ շատ անկեղծօրէն եւ նոյն իսկ ստեղծել ժողովը՝ վերադառնալ այն հանգստեանը, ուրկից թիրեւս հիմա կը փա-